*նեըն։ Թողում ասել Չինկիլի-Խանի, Լանկ-Թամուրի, Ջհան-Ջահի, Ջալալինների Ս. Շահ-Ազասի, Օսմանյուց, Նադիր-Շահի և Լէզկինների գործած արիւնհեղութիւնները, և սպանութիւնները, որք անասելի են և անհամար։*

*Այս կրօնական հալածանքները, նահատակութիւնները և բռնութիւնները քանդում են Աղուանից տունը։ Այսօր Ծովզէից, Կասպից և Մազբաց (Աղուանից երկրում մնացեալ մասերն), Լփնաց, ձղրաց և եւանկիւնու մէջ եղած ցեղերն ամբողջապէս մահմէտական դարձած են. Ուտեաց մի փոքր մասն յունադաւանութիւն ընդունած է. իսկ ամենամեծ մասն մահմէտականութիւն։*

*Ուտեաց ապրիլն մնացած է հայադաւան միայն վեց գիւղ, Լփնաց ցեղից մի գիւղ և ձղրաց ցեղից մի գիւղ։ Այնպէս որ այսօր մօտ 150000 ծուխ ժողովուրդ կրօնափոխ եղած է յիշեալ ցեղերից. որք են՝ Ծովզէացիք, Ուտիացիք, Լփնացիք, Կասպեցիք, ձղրացիք, Մազբացիք և Եւանկիւնամէջ բնակող ամբողջ ցեղերն»։*

Կիրակոս պատմագիր 1858. Մոսկուա. յերես. 111

*Համառօտ հիւսուածք պատմութեանց կողմանցն Աղուանից, ընդ ներքոյս զրուցադրաբան:*

Սկիզբն առաջնոյ պատմութեանն եգաք ղսուրբ Լուսաւորիչն Հայոց, զառաքեալ և զմարտիրոս, և զաթոռակալ երից սուրբ առաքելոցն՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի և Ցուդայի Յակոբեան, զսուրբն Գրիգորիոս, և ազօթիւք նորա հասաք մինչեւ ցայս վայր։ Իսկ երկրորդ հատուածիս դիցուք գլուխ զԼուսաւորիչս կողմանցըն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոց։ Մանաւանդ զի և առաջնմրդ նոցա Հայաւեզուք Հայերէնախօսք յօրովք էին. թագաւորքն՝ հնազանդք թագաւորացն Հայոց՝ ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսքն ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն՝ ուղղափառութեամբ ընդ մեզ կալեալ ի կրօնս, վասն այնորիկ արժան է ի միասին լինել լի-